

վախճանած է 1619ին. ուստի հարկ է հետեւցնել թէ Սիմէոն 1619ին պարապած էր իւր Ուղեգրութեան խմբագրութեամբ եւ գրած էր արդէն 1—138 էջերը :

Սիմէոն իրրեւ ուղեւոր նկատող միայն եղած է. չէ եղած միջամուխ ազգային-եկեղեցական-քաղաքական խնդիրներու մէջ. նա նկատած է ազգերն ընդհանրապէս եւ անոնց ազրելակերպը, քրիստոնէութիւնն առհասարակ եւ անոր մշակոյթը: Կը հետաքրքրուի տեղագրութեամբ եւ կենցաղագիտութեամբ, բայց նաեւ իւրաքանչիւր երկրի եւ քաղաքի արդիւնաբերութեամբ եւ քաղաքակրթութեամբ:

Ժամանակակից քաղաքական անցուղարձերու եւ եկեղեցական-ազգային կեանքի նկարագրութեան մէջ ճոխազոյն է Գրիգոր Դարանազեցի, որուն նպատակն է ժամանակագրութիւն գրել. Սիմէոն ուղեգիր է, կ'արձանագրէ տեսածները միայն, առարկայօրէն: Ինչ որ վրիպած է Դարանազեցոյ ուշադրութենէն, հաղորդած է Լեհացին: Ըմբռնելու համար ժամանակին հանգամանքները, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ երկու հեղինակներս ալ:

Սիմէոն ուզած է իւր ուղեգրութեամբը ուղեցոյց մը տալ այն ուխտաւորներու, որոնք կը փափագին ընթանալ նոյն ճանապարհով: Ուզած է բաժին հանել անոնց իւր փորձառութենէն: Այս նպատակով ալ մանրամասն կը